ՀՐԱՊԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱԼԻՔՈՎ

ՀԱՆՈՒՆ ԻՍԿԱԿԱՆ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ԵՐԵՎԱԿԱՅԱԿԱՆ ԱԶԳԱՄԻՋՅԱՆ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ

Մեր երկրում ազգամիջյան իրադրության և ազգամիջյան հարաբերությունների մասին բավական շատ է գրվել: Թվում էր, թե և՛ անցյալում, և՛ ներկայումս այդ կենսահույզ պրոբլեմի տեսական ընդհանրացումների և իսկական պատկերի բացահայտումների պակաս չկա: Այսպիսով, հարցը փոխադրվում է գործնական քայլերի բնագավառ, որոնք կոչված են շտկել ազգային քաղաքականության ոլորտում եղած շեղումները և պայմաններ ստեղծել, որոնք ապահովեն մեր բազմազգ երկրի նորմալ զարգացումը: Բնական է, որ ասվածը ամենից առաջ վերաբերում է այն ռեգիոններին, շրջաններին, ազգային-վարչական միավորումներին, որտեղ այդպիսի պրոբլեմներ կան: Բայց ահա պրոբլեմ է, թե ինչպես վարվել, եթե ոչ միայն չի դրսևորվում ազգային սուր պրոբլեմների լուծման ուղիով ընթանալու ցանկություն, այլև ժխտվում է այդ պրոբլեմների բուն գոյությունը:

ԼՂԻՄ-ի պրոբլեմը, Ադրբեջանական ԽՍՀ-ում քրդերի դրության հարցը հանրահայտ է. դրանց անհապաղ լուծման անհրաժեշտությունն արձանագրվեց ազգային հարցին նվիրված ԽՄԿԿ Կենտկոմի պլատֆորմում, վերջերս տեղի ունեցած ԽՄԿԿ Կենտկոմի պլենումի նյութերում: Իսկ ինչպե՞ս են դրան արձագանքում Ադրբեջանական ԽՍՀ-ում:

Ահա մի բնորոշ օրինակ: «Վիշկա» թերթը (12. 9. 89 թ.) հրապարակել է մի ծավալուն հոդված Ս. Մ. Կիրովի անվան ադրբեջանական պետական համալսարանի պատմության ֆակուլտետի կոլեկտիվի ղեկավարների ստորագրությամբ: Այդ հրապարակումը մեր ուշադրությունը գրավեց ոչ միայն իր կեղծարարական բնույթով, իսկական, պատմական փաստերի նենգափոխումով, ԼՂԻՄ-ում հայերի և Ադրբեջանում քրդերի ազգային սուր պրոբլեմի էությունը թեկուզ մասամբ հասկանալու տարրական պատրաստականության բացակայությամբ: Եվ ահա թե ինչու:

Մամուլում, այդ թվում նաև միութենական մամուլում, հրապարակվել են աղաղակող փաստեր 1930 թ. Ադրբեջանում Քրդստանի գավառի վերացման, քրդերին հայրենի վայրերից վերաբնակեցնելու, այդ հանրապետությունում քրդերի թվակազմի կոպիտ կեղծման վերաբերյալ, որի վերջաբանը դարձավ 1979թ. արված անպատկառ պաշտոնական հայտարարությունն այն մասին, թե «Ադրբեջանում քրդեր չկան»: Ավելին, այդ հրապարակման մեջ խիստ տոնով դատապարտվում է ԽՄԿԿ Կենտկոմի պլատֆորմը «Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի արհեստական ստեղծման» փորձերի համար: Հոդվածում, որը քրդերի ազգային հարցի մասին ադրբեջանական պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի ու կոլեկտիվի յուրատեսակ որոշումն է, ասված է. «Նախագծում բռնացման ենթարկված ժողովուրդների թվում երկու անգամ հիշատակված են քրդերը...». «Քրդական պրոբլեմը» նույնպես ստեղծվում է արհեստականորեն, այն պարտադրվում է ադրբեջանական ժողովրդին և կարևոր դեր է խաղում ծայրահեղականների հետագա պլաններում»:

Կարելի է չնախանձել Ադրբեջանի պատմական գիտությանը, հատկապես նրա այն մասին, որը վերաբերում է ազգամիջյան հարաբերություններին, քանի որ, եթե կոպտորեն խեղաթյուրվում են ոչ հեռու անցյալի ու արդիականության փաստերը և իրադարձությունները, ապա ինչպիսի՞ն է այն պրոբլեմների ճակատագիրը, որոնց արմատները հասնում են վաղ ժամանակները...

Պատմաբանների կադրերի դարբնոցը իր ղեկավարների բերաններով պիղծ խաղի ժամանակ լավ ական տեղադրելով, հայտարարում է. «Իրենց ներկայիս բնակեցման վայրերում նրանք (այսինքն՝ քրդերը — Շ. Մ.) կազմում են տեղի բնակչության մոտ 10 տոկոսը: Հանրապետությունում չկա ոչ մի վարչական-շրջանային միավոր, որտեղ քուրդ բնակչության տեսակարար կշիռը անցնի այդ թվից»: Կա մի հին ճշմարտություն. անլուրջ փաստարկների ու պնդումների հետ լուրջ բանավեճ վարելը անօգտակար զբաղմունք է: Այնուամենայնիվ, որոշ հարցեր են առաջանում: Ո՞վ պետք է պատասխան տա այն հարցին, որ 1979 թ. պաշտոնական տվյալներով Ադրբեջանում քրդեր չկային, իսկ հիմա պարզվում է, որ կան, բայց իրենց բնակեցման շրջաններում նրանց թիվը չի անցնում տեղի բնակչության 10 տոկոսից (մենք չենք կարող հիշեցնել, որ այն տըխրահռչակ քաղաքականությունը, որի համաձայն քրդերի թվակազմը չպետք է գերազանցի տեղի բնակչության որոշակի տոկոսից, ուծացման քաղաքականության հայտնի լծակն է, որը անցյալում և ներկայումս անցկացվում է հարևան հանրապետությունում): Ուրիշ, ավելի կարևոր հարց. մի՞թե ադրբեջանցի գիտնականներից ոչ ոք համարձակություն չունի ասելու, որ Ադրբեջանում եղել է քրդական գավառ՝ «Խորհրդային Քրդստան» բնորոշ անունով տպագիր օրգանով և, որ էլ ավելի կարևոր է, այդ «Խորհրդային Քրդստանը» (կամ ինչպես այն ժամանակ անվանում էին՝ «Կարմիր Քրդստանը») չէր կարող ստեղծվել մի շրջանում, որտեղ քրդերի թվակազմը կարող էր ադրբեջանցիներից քիչ լինել: Չէ՞ որ անվիճելի է, որ քրդերը տվյալ ազգային-վարչական միավորումում կազմում էին մեծամասնություն: Եթե «քրդերը երբեք բռնացման չեն ենթարկվել Ադրբեջանում», ապա ու՞ր են անհետացել գավառի 40 հազարից ավելի քրդերը, որոնք բնական աճով այժմ կարող էին հասնել առնվազն 200 հազարի (որպես հիմք վերցնում ենք քրդերի թվակազմի աճի տեմպերը Հայաստանում և Վրաստանում):

ԼՂԻՄ-ի պրոբլեմի և Ադրբեջանում քրդերի ազգային իրավունքների հարցի անամոթ ժխտման ոգով տոգորված այդ հոդվածը բովանդակում է նաև այսպիսի տողեր. «Միանգամայն ակնհայտ է, որ «քրդական պրոբլեմը» նախագծի մեջ խցկվել է որպես «Լեռնային Ղարաբաղի պրոբլեմի» քողածածկույթ՝ նրա այն մասում, որը նպատակամղված է Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի միջև տարածքային միջանցքի վերացմանը»: Հետևությունը միանգամայն ակնհայտ է: Չկա ԼՂԻՄ-ի պրոբլեմ և Ադրբեջանի քրդերի ազգային իրավունքների հարց, ուրեմն՝ դրանց լուծման մասին խոսք լինել չի կարող: Քանի որ դա լայնորեն տարածված կարծիք է Ադրբեջանում, և դրան համամիտ են հանրապետության պաշտոնական ատյանները, ապա ինձ հետաքրքրում է հետևյալ հարցը. ինչի՞ վրա է խարսխվում միութենական ատյանների լավատեսությունը Ադրբեջանում ազգային սուր պրոբլեմների լուծման հնարավորությունների վերաբերյալ, երբ այդ պրոբլեմների բուն գոյությունն իսկ ժխտվում է, ավելին, դրվում է հենց Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակի վերացման հարցը, և դեռ պետք է լսել այն ժողովրդի իսկական թվակազմի մասին, որը տասը տարի առաջ, եթե հավատալու լինենք այդ հանրապետության վիճակագրությանը, գոյություն չուներ:

Մեր պատմության անչափ լուրջ դասերից մեկը խոսքի և գործի տարբերության կործանարարությունն է, ճառախոսության առատությունը և կոնկրետ քայլերի բացակայությունը: Չէ՞ որ ստացվում է, որ բոլորը ճանաչում են ԼՂԻՄ-ի պրոբլեմի սուր բնույթը, նրա ժողովրդի պահանջների արդարացիությունը, ինչպես նաև իրենց ազգային իրավունքները հարգելու մասին քրդերի պահանջները, իսկ կոնկրետ պրոբլեմը փակուղուց դուրս բերելու քայլեր չեն ձեռնարկվում, այդ պրոբլեմների ճակատագիրը կապվում է այն շրջանների հետ, որոնք այդ մասին մտածել էլ չեն ուզում: Իրավիճակը, ինչպես երբեք, ստույգ արտացոլված է հետևյալ ասացվածքում. «Իսկ Վասկան լսում է և ուտում»:

Շ. ՄՀՈՅԱՆ
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր